ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/136

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Մասնակից՝ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով գնանշման հարցում, թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7886-2021 գրությամբ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.05.2021թ.-ի թիվ ՀԲ//11969-2021 գրության հիման վրա, 18.05.2021թ.-ին «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.05.2021թ.-ին:

19.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/136 համարի ծածկագիրը:

26.05.2021թ.-ին, 03.06.2021թ.-ին և 17.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 03.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.06.2021թ.-ին:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 12.05.2021թ.-ի թիվ ՀԲ//11969-2021 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի ապրիլի 13-ին կնքված N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ-ն ստանձնել է՝

ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, Պայմանագրով սահմանված թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտա-վորվածություն:

Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծը ծանուցվել է 16.04.2021թ.՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո: Սակայն, համաձայնագրի ստորագրված տարբերակը «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 11.06.2021թ.-ի թիվ ՀԲ//14892 և 14.06.2021թ.-ի թիվ ՀԲ//15066 գրություններով ներկայացրել է «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի կողմից ուղարկված ծրարում առկա փաստաթղթերի պատճենները, միաժամանակ հայտնել է հետևյալը.

«ՍՅ-ԼՕ-2021/136 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն իր կողմից կնքված համաձայնագրի երկու օրինակները կից գրությամբ պետք է ներկայացներ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Մայիսի 7-ին լրանում էր համաձայնագրի կնքման վերջնաժամկետը: «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված համաձայնագրերը փոստով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են առաքվել մայիսի 10-ին:

Կից Ձեզ ենք ուղարկում ծրարի պատճենը, որտեղ երևում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից դրված մուտքի ամսաթիվը:»:

3. <u>«Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 19.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7886-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով 26.05.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նորայր Շախնազարյան

Միքայելի» Ա/Ձ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

v. 23.03.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

vi. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի միջև 13.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

vii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

viii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

ix. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները մատուցվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2021թ.-ի դեկտեմբերի 25-ը:

x. Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

xi. Պատվիրատուն 16.04.2021թ.-ին դիմել է Մասնակցին և հայտնել է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 13.04.2021թ.-ին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, որի հիման վրա կնքվելու է համապատասխան համաձայնագիր, ուստի առաջարկվել է սույն ծանուցումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կնքել համաձայնագիրը երկու օրինակից և կից գրությամբ ներկայացնել Պատվիրատուին:

xii. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի թիվ 85, կոդը՝ RR299058106AM/ համաձայն՝ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն 07.05.2021թ.-ին պատվիրված նամակով Պատվիրատուին (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3) ուղարկել է առաքանի:

xiii. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի թիվ 85, կոդը՝ RR299058106AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 10.05.2021թ.-ին:

xiv. www.gnumner.am համացանցային կայքում 10.05.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.05.2021թ.-ի թիվ ՀԲ//11743-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի ապրիլի 13-ին կնքված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ- 2021/17Ծ» պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար Մասնակիցը ստանձնել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, Պայմանագրով սահմանված թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորվածություն: Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծը ծանուցվել է 16.04.2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո: Սակայն, համաձայնագրի ստորագրված տարբերակը Մասնակցի կողմից ներկայացվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված ժամկետի խախտմամբ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7886-2021 գրությամբ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ պայմանագրով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ

որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ պայմանգիր կնքած մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և համաձայնագրի նախագիծը, պարտավոր է 15 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված համաձայնագրի նախագիծն, որակավորման ու պայմանագրի կատարման ապահովումները:

Ընդ որում, եթե պայմաանգիր կնքած մասնակիցը համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և համաձայնագրի նախագիծն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում համաձայնագիրը և պատվիրատուին չի ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին

չներկայացնելով համաձայնագրի օրինակը և/կամ ապահովումները, պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի միջև 13.04.2021թ.-ին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» ծածկագրով պետական գնման պայմանագիր 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում: Նույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները մատուցվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2021թ.-ի դեկտեմբերի 25-ը: Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուն 16.04.2021թ.-ին դիմել է Մասնակցին և հայտնել է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 13.04.2021թ.-ին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ» պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, որի հիման վրա կնքվելու է համապատասխան համաձայնագիր,

ուստի առաջարկվել է սույն ծանուցումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կնքել համաձայնագիրը երկու օրինակից և կից գրությամբ ներկայացնել Պատվիրատուին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի ապրիլի 13-ին կնքված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ- 2021/17Ծ» պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար Մասնակիցը ստանձնել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, Պայմանագրով սահմանված թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորվածություն: Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծը ծանուցվել է 16.04.2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո: Սակայն, համաձայնագրի ստորագրված տարբերակը Մասնակցի կողմից ներկայացվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված ժամկետի խախտմամբ: Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, Պայմանագիրը միակողմանի լուծել է՝ www.gnumner.am համացանցային կայքում 10.05.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.05.2021թ.-ի թիվ ՀԲ//11743-2021 ծանուցումը:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 85, կոդը՝ RR299058106AM/ համաձայն՝ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն 07.05.2021թ.-ին պատվիրված նամակով Պատվիրատուին (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 85, կոդը՝ RR299058106AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 10.05.2021թ.-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից՝ 16.04.2021թ.-ին, ստանալով համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և համաձայնագիր նախագիծը, որպես պայմանագիր կնքած մասնակից համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ 07.05.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ընդ որում, հարկ է նկատել, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Կարգի 45-րդ կետի հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությանն է դիմել 12.05.2021թ.-ի թիվ ՀԲ//11969 գրությամբ, այն դեպքում, երբ 11.06.2021թ.-ի թիվ ՀԲ//14892 և 14.06.2021թ.-ի թիվ ՀԲ//15066 գրություններով Պատվիրատուն հավաստել է, որ վերջինս փոստի միջոցով դեռևս 10.05.2021թ.-ին ստացել է «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված համաձայնագիրը:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված համաձայնագրի բնօրինակը կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և համաձայնագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ն, որպես պայմանագիր կնքած մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և համաձայնագրի նախագիծը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ 07.05.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է համաձայնագիրը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7886-2021 գրությամբ «Նորայր Շախնազարյան Միքայելի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/136 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**